ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕԾԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԵՎ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒՌ -ՄԿՐՏԱՐԱՆԸ

Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ տեղի ունեցավ նորակառույց Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանի օծման արարողությունը: Մատուռ-մկրտարանը կառուցվել է լոնդոնաբնակ բարերար Արմեն Սարգսյանի հովանավորությամբ, ճարտարապետն է Ջիմ Թորոսյանը:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանների, Ս. Էջմիածին ժամանած ազգային բարերարների և քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ "Հրաշափառի" ներքո հանդիսավոր թափորով մուտք գործեց նորակառույց մատուռ-մկրտարան: Հոգեպարար շարականների և սաղմոսների երգեցողության ներքո Նորին Սրբությունը կատարեց մատուռ-մկրտարանի օծման արարողությունը: Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց նորակառույց մկրտարանի Ս. Սեղանը, չորս ավետարանիչների անունները կրող խորանի սյուները և Սուրբ Ավազանները: Օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց նոր մկրտարանի օծման առիթով՝ հույս հայտնելով, որ նրա Սուրբ Ավազաններում բազում հայորդիներ պիտի մկրտվեն՝ դառնալով մեր Եկեղեցու և մեր Հայրենիքի արժանավոր զավակները:

"Մայր Տաճարում աղոթական կյանքի պահանջներից թելադրված՝ ժամանակին մկրտարանը հաստատվեց Ղազարապատ շենքի մի հատվածում, քանզի Խորհրդային շրջանում հնարավոր չէր նոր մկրտարան կառուցել: Ուրախության առանձնակի զգացումով են համակված այսօր մեր հոգիները, և մենք փառք ենք մատուցում Բարձրյալին, որ նոր աղոթատուն է հառնել Մայր Տաճարի հայացքի ներքո, հովանու ներքո Միածնաէջ մեր սրբօրրանի, որն առավել պայծառություն է հաղորդում պատմական և նվիրական մեր Մայրավանքին, պայծառությունը՝ մեր ազատ կյանքի, մեր վերականգնված պետականության:

Նորաշուք, վարդաքար մկրտարանը մեր աղոթքներն է բարձրացնելու երկինք Սուրբ Վարդան Զորավարի և Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությամբ, ովքեր եղան մեր Տիրոջ փառքի վկաները, երանելի սրբերը, չարի դեմ հաղթանակով պատրաստեցին Տիրոջ ճանապարհները, որպեսզի աշխարհում Աստծո օրհնությամբ ծնունդ առնեն բարի պտուղներ: Սուրբ Հովհաննես Մկրտչի և Սուրբ Վարդանի պաշտելի մասունքները՝ ամփոփված մեր հայրենի հողում, սրբացնում են մեր երկիրը և նրանց վրա կառուցված եկեղեցիները, դարեր շարունակ օրհնում մեր կյանքը: Արդարն, կառուցվող ամեն աղոթատան հետ Աստված ավելի է մոտենում մեր ժողովրդին, և երկնային օրհնությունը առավել առատանում մեր կյանքում",- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց մկրտարանի բարերար Արմեն Սարգսյանին, և ի գնահատություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած իր եկեղեցաշեն ծառայությունների՝ նրան շնորհեց Հայ Առաքելական Եկեղեցու “Ս. Գրիգոր Լուսավորիչ” պատվո բարձր շքանշանը՝ մաղթելով, որ Տերը երկար ու երջանիկ օրեր և ամենայն հաջողություններ պարգևի բարերարին և նրա ընտանիքին:

Մատուռի օծման արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ, մշակույթի և գիտության գործիչներ, ազգային բարերարներ և բազմաթիվ ուխտավոր հայորդիներ:

Արարողության ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ս. ՎԱՐԴԱՆ ԵՎ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՍՈՒԻՄԿՐՏԱՐԱՆԻ
ՕԹՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ Է
ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՄԿՐՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՐԵՐԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ